ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՄՇԱԿՈՒԹԱՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

ԳԱԳԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Ժամանակակից մարդու կյանքն աչքի է ընկնում ռացիոնալ բովանդակություն ունեցող ավանդական համասոցիալական արժեքներից հրաժարվելու անթաքույց միտումով: Ընթանում է կեցության և ինքնաճանաչողության վերաիմաստավորման ու վերագնահատման մի համընդհանուր գործընթաց, ինչի հետևանքով առաջնային են դառնում այնպիսի արժեքներ, ինչպիսիք են օգտապաշտությունը, միջանձնային հարաբերությունների մակերեսայնությունը, մասնավոր կյանքի նկատմամբ ընդգծված հետաքրքրությունը, սոցիալականի նկատմամբ անտարբերությունը: Իրադարձությունների այդպիսի զարգացումը խզում է առաջացնում գոյութենական անվտանգության ավանդական արժեհամակարգում՝ հասարակական համակարգը տեղափոխելով գործառության անծանոթ ու անորոշ «վթարային ուղի»: Մեր ժամանակի տագնապալի ախտանիշ է դառնում սոցիալական կազմակերպման կայուն ձևերի կորուստը, սոցիալական կապերի ու հարաբերությունների աստիճանական ձևախեղումը սպառնում է վերածվելու սոցիալական «էնտրոպիայի», թուլանում են հասարակական կյանքի սոցիալական կառուցարկման իրական ակունքները: Սոցիալ-խմբային նույնականացման կայուն կառուցվածքների խախտումը, նոր «ատոմացումը» և դրա դարձերեսը հանդիսացող զանգվածայնացումը դառնում են «սոցիալականի մահվան» տագնապալի ազդանշաններ, սոցիալականը վերածվում է առարկայական բովանդակությունից զուրկ դատարկ նշանի՝ կեղծանմանակի (սիմուլյակրի-Ժ. Բոդրիյար): Մի՞թե այս ամենն ազդարարում է «աստվածային սոցիալականի» (Մ. Վեբեր) մայրամուտը, սա՞ է քաղաքակրթական առաջադիմության սոցիոմշակութային գինը: Այս հարցերին պատասխանելու և ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող մշակութամարդաբանական փոխակերպումների էությունը հասկանալու համար դիմենք հասարակության պատմական տարբեր տիպերի համակեցության կազմակերպման և սոցիալական հաղորդակցության իրականացման համեմատական վերլուծությանը: Սակայն մինչև այդ անդրադառնանք մեթոդաբանական նշանակություն ունեցող որոշ խնդիրների:

Հասարակության պատմական հիմնական տիպերի կարևորագույն սոցիոմշակութային բնութագրերի համեմատական վերլուծությունը հիմնվում է **քաղաքակրթական-տիպաբանական վերլուծության** վրա, ինչը հնարավորություն է ընձեռում տեսականորեն ներկայացնելու այս կամ այն քաղաքակրթական տիպի էական բնութագրերը՝ անկախ դրա մշակութապատմական իրադրային համատեքստից: Հասարակության պատմական այդ տիպերը, ըստ էության, իդեալական օբյեկտներ են, որոնք որպես այդպիսին սոցիալական իրականության մեջ չեն հանդիպում: Սոցիալական օբյեկտը շատ ավելի հարուստ է, քան իդեալական-տիպական պատկերացումների վրա հիմնված ցանկացած տեսական նախագիծ, քանի որ այն անկարող է ներառել հոգևոր-մշակութային իրողությունների ողջ բազմազանությունը: Դրանք երևակայության ռացիոնալ կազմակերպման (Մ. Վեբեր), վերլուծաբանի կողմից սոցիալական տարբեր օրգանիզմների տիպաբանական բնութագրերի համեմատական վերլուծության արդյունք են, որտեղ կարևորը անհատականի մեջ տիպականը գտնելու և ամրագրելու կարողությունն է: Ի տարբերություն բնության՝ սոցիալական աշխարհը իմաստ է պարունակում (Ա. Շյուց), այդ իսկ պատճառով սոցիալական ցանկացած երևույթի հետազոտության համար անհրաժեշտ է վերակառուցել սոցիալականի դրսևորման իմաստաարժեքային կառուցվածքն ու նշանակությունը: Սոցիալական իրականության իմաստային օբյեկտիվ կառուցվածքից դուրս և անկախ մարդկային համակեցությունն ու գործունեությունն անհնարին են: Ահա թե ինչու սոցիալականի ճշմարիտ ճանաչողության ամենաարդյունավետ միջոցը մշակութամարդաբանական համակողմանի հետազոտությունն է: Իմաստային օբյեկտիվ կառուցվածքի կարևորագույն բաղադրիչները մարդ-բնություն, մարդ-մարդ և մարդ-ներաշխարհ փոխհարաբերությունների հիմնական բնութագծերն արտահայտող սոցիոմշակույթի աշխարհայացքային ունիվերսալիաներն են (Վ. Ս. Ստյոպին), որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ սոցիալական իրականության իմաստավորման փորձի խտացված արտահայտություն: Շնորհիվ սոցիոմշակութային ունիվերսալիաների՝ նոր սերունդն ամեն անգամ իր պատմությունն սկսում է ոչ թե նոր էջից, այլ, հենվելով ժառանգորդված ունիվերսալիաների վրա, սոցիալիզացվելով ճանաչում և վերափոխում է աշխարհը[1]: «Սոցիոմշակութային ունիվերսալիա» հասկացության տրամաբանական ծավալն ավելի լայն է, քան փիլիսոփայական կատեգորիաների ծավալը, քանի որ այն ոչ թե պրակտիկ գործունեության վերացարկված, կենդանի բովանդակությունից զուրկ սխեմաների ինտելեկտուալ իմաստավորում է, այլ իրականության հուզազգայական ապրումի, մարդկային ամենօրյա փորձի, նվաճումների, երջանկության ու տառապանքի մարմնավորումը: Սո-

[1] Տե՛ս **Степин В. С.** Философская антропология и философия науки. М., 2015, էջ 32-47:

ցիոմշակութային ունիվերսալիաների բովանդակությունը մարդկային փորձի կուտակմանը և զարգացմանը զուգընթաց անընդհատ փոխվում է: Ունիվերսալիաները միաժամանակ նաև սոցիալական կայունության կերտման և պահպանման կարևորագույն օղակներ են և, որպես այդպիսին, հապաղումով են արձագանքում քաղաքակրթության անօրգանական մարմնի հաճախադեպ փոփոխություններին:

Սոցիալական իրականության ժամանակակից խճապատկերն ավանդականի, արդյունաբերականի և հետարդյունաբերականի (հետարդիականի) ծայրահեղորեն բարդ համադրություն է: Սոցիալականի մահվան՝ որպես առաջադիմության քաղաքակրթական հատուցման ընթացքի և ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող տարատեսակ, հաճախ անորոշ ու անկանխատեսելի փոխակերպումների էությունը հասկանալու համար դիմենք հասարակության պատմական տարբեր տիպերի կյանքի մշակույթի, այսինքն՝ կյանքի ամենօրյա կազմակերպման և սոցիալական հաղորդակցության վերը նշված երեք տիպերի համեմատական վերլուծությանը:

Ավանդական (ագրարային) հասարակության մեջ սոցիալական բոլոր հարաբերությունները կառուցարկվում և կարգավորվում են բացառապես ավանդույթներով ու սովորույթներով: Դրանց պահպանումն ու նույնական վերարտադրությունն ավելի մեծ արժեք են ներկայացնում, քան զարգացումը: Հասարակական կացութաձևին բնորոշ են սոցիալական կայուն ընդհանրությունների գոյությունը և խավային աստիճանակարգությունը: Որպես կանոն՝ ավանդական հասարակության մեջ գերիշխում են անձնական կախվածության վրա հիմնված սոցիալական կարճ, անձնավորված կապերը, որոնք հաստատվում են սոցիալական աստիճանակարգության միևնույն մակարդակի վրա գտնվող մարդկանց փոխվստահելի հարաբերությունների միջոցով: Ավանդական հասարակության մեջ մարդն անվերապահորեն պետք է ենթարկվի սոցիալական ամբողջին, նա պետք է աներկբայորեն ընդունի և անտրտունջ հարմարվի առաջնային սոցիալական խմբերի ներքին կանոնակարգով ընդունված սկզբունքներին: Այդպիսի հասարակության մեջ մարդը …երբեք լիակատար անկախ չէ և ոչ էլ լիակատար ստրկացված: Յուրաքանչյուրի շուրջ նախախնամությունը նշագրում է նրա ճակատագրի շրջանը, որից դուրս գալն անհնար է, սակայն նրա սահմաններում մարդն օժտված է իշխանությամբ և ազատությամբ[2]: Ավանդական հասարակության սոցիալ-խմբային խստագույն նույնականացման հետևանքով մարդը սերտաճում, առավելագույնս միակցվում է ժառանգորդված խավային դերին: Մշակութամարդաբանական իմաստով ավանդական հասարակությանը բնորոշ է հայրենական օջախի նկատմամբ սերնդեսերունդ փոխանցված գորովաշատ ու ջերմ

[2] Տե՛ս **Токвиль А.** Демократия в Америке. М., 1992, էջ 160-161:

վերաբերմունքը: Ավանդական հասարակության մեջ գերիշխող անմիջական, դեմ առ դեմ, շիտակ հարաբերությունները նպաստում են Ուրիշի՝ որպես անհատականության դրսևորման հարուստ բազմազանության կրողի ամբողջական ընկալմանը: Սրա հետ միաժամանակ՝ սոցիալական կապերի և հարաբերությունների անձնավորված, դիմավոր բնույթը չի նպաստում սոցիալական կենսագործունեության ինստիտուցիոնալացմանը, մանավանդ որ դրա անհրաժեշտությունը չկա: Մտածողության և վարքի կարծրատիպերը (սոցիալական կոդերը) ներկառուցված են հաբիտուսի (Պ. Բուրդյե) մեջ: Դա սոցիոկենտրոն հասարակություն է, մի հասարակություն, որտեղ մարդու էությունն ընկալվում է ոչ թե որպես առանձին անհատին բնորոշ վերացարկում, այլ որպես տվյալ հասարակության սոցիալական հարաբերությունների ամբողջություն: Ավանդական հասարակության ինտերսուբյեկտիվ սոցիալական նշանակությունների համակարգը համապատասխանում է անձնավորված, «կարճ» սոցիալական կապերին: Արտատնտեսական հարկադրանքին համապատասխանում են անընչաքաղցության և թեկուզ կարիքի մեջ՝ վեհանձն ապրելու զուսպ արժեքները: Ժամանակակից սոցիալական մարդաբանությունն այս հանգամանքը բացատրում է ոչ այնքան աշխատավոր մարդկանց բարոյականությամբ, որքան ավանդական հասարակության բուն իսկ բնույթով, «կյանքի բնութենական և սոցիալական սահմանագծում համատեղ գոյատևելու անհրաժեշտությամբ»[3]: Ավանդապաշտական հոգեմտակերտվածքին բնորոշ է ինստրումենտալ գիտելիքի (այդ թվում և կրոնական) նկատմամբ աշխարհայացքային արժեքների, նպատակների ռացիոնալության նկատմամբ՝ արժեքային ռացիոնալության առաջնայնությունը: Պատահական չէ, որ այդ հասարակությունում մարդկանց աշխարհայացքը ձևավորվում է ավանդույթների և հեղինակության անմիջական ազդեցությամբ: Նախնիներից ժառանգված և բազմիցս փորձարկված ու ստուգված կյանքն ու կենցաղը բացառում են այլընտրանքի, առավել ևս նորարարության հնարավորությունը: Սերնդափոխության անշտապ ընթացքը թե՛ գեղջուկների համեստ կացարաններում և թե՛ ազնվականական դղյակներում չի փոխում մարդկանց ամենօրյա կյանքը: Մարդկանց մեծ մասը ողջ կյանքի ընթացքում ապրում է լոկալ հանրության մեջ (օրինակ՝ գյուղում), մեծ հասարակության հետ կապերը թույլ են, ազգակցական կապերը՝ ամուր: Ծննդավայրը և տեղանքը, որտեղ մարդն անցկացնում է իր ողջ կյանքը, հագեցվում են հուզական երանգավորում ունեցող սրբազան իմաստով, կացարանն ընկալվում է որպես սոցիալական կոորդինատների հաշվարկման մեկնակետ և սեփական կենսաշխարհի միակ և անփոխարինելի կենտրոն: Սոցիալական տարածության մեջ նման կարևոր նշանակություն ունեն նաև նախնիների վերջին հանգրվանները, կրոնածիսական շինությունները, սրբա-

[3] **Козлова Н. Н.** Социально-историческая антропология. М., 1999, с. 56.

զան նշանակություն ունեցող ուխտատեղիները: Կյանքի ռիթմը դանդաղ և հավասարակշռված է: Ավանդական հասարակության մեջ ժամանակի ընկալումն արտահայտվում է գյուղատնտեսական աշխատանքների ամենամյա իրարահաջորդ փուլերի միջոցով: Ժամանակի չափման ճշգրիտ գործիքների բացակայությունը պայմանավորված է հենց այդ հանգամանքով, մեխանիկական ժամացույցը համարվում էր պերճանքի ավելորդ առարկա: Ժամանակի մեջ կողմնորոշվելու միջնադարյան միջոցները եկեղեցու զանգերի ղողանջն էր, կրոնաձիսական տոները: Ագրարային հասարակության մարդը՝ որպես տոհմացեղային կամ գյուղական քիչ թե շատ մեծ համայնքի անդամ, ժամանակն ընկալում էր «կոլեկտիվ գիտակցության» տեսանկյունից: Անգամ քաղաքական և հոգևոր իշխանության բարձրագույն խորհուրդները հրավիրվում էին առանց հստակ ժամանակ սահմանելու: Ավանդական հասարակությանը բնորոշ է **տեմպորալ լոկալիզմը**, որը արդյունաբերական հասարակության մեջ տրանսպորտային հաղորդակցության միջոցների զարգացման և միասնական քաղաքացիական ժամանակի ներդրման շնորհիվ զգալիորեն թուլանում է: Ի տարբերություն արդյունաբերական հասարակության՝ ավանդապահական անշտապ գիտակցությունն անտեղյակ է ժամանակի սոցիալական արժեքի և նշանակության մասին պատկերացումներին: Այդ հասարակության մարդն աշխարհն ընկալում է որպես մի սրբազան ամբողջություն, որը փոփոխության ենթակա չէ: Գերիշխում են կոլեկտիվիստական և ոչ թե անհատապաշտական դիրքորոշումները, քանի որ անհատական գործողությունների ազատությունը, սոցիումի կողմից չվերահսկվող վարքը կարող են հանգեցնել ժամանակի ընթացքում փորձարկված և ստուգված աշխարհակարգի խախտմանը: Կոլեկտիվ շահերը գերիշխում են մասնավոր շահերի նկատմամբ: Ագրարային հասարակության մեջ գերակայում են ոչ թե շուկայական փոխանակության, այլ վերաբաշխման հարաբերությունները, շուկայական տնտեսության տարրերը խստորեն կարգավորվում են, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ շուկայական ազատ հարաբերությունները նպաստում են սոցիալական մոբիլության աճին և կարող են փոխել հասարակության սոցիալական կառուցվածքը: Վերաբաշխման հարաբերությունները կարգավորվում են ավանդույթներով, շուկայական գները՝ ո՛չ, հարկադրական վերաբաշխումը խոչընդոտում է ինչպես առանձին մարդկանց, այնպես էլ խավերի հարստացումը[4]:

Ավանդական սոցիոմշակույթի քաղաքակրթական մուտացիաները և Եվրոպայում բողոքական էթիկայի տարածումը, նրան բնորոշ արտադրական աշխատանքի պաշտամունքով, ստեղծում են քաղաքակրթական զարգացման նոր տիպ՝ արդյունաբերական արդիականությունը

[4] Ագրարային հասարակության մշակութամարդաբանական բնութագրի մասին առավել մանրամասն տե՛ս **Гуревич А. Я.** Категории средневековой культуры. М., 1972, **Барг М. А.** Эпохи и идеи, М., 1987:

(Մոդեռնը)։ Արդյունաբերական հեղափոխության հետևանքով ստեղծված ժամանակակից հասարակությունը սոցիալական ճկուն, շարժուն կառուցվածք ունի, նրան բնորոշ են աշխատանքի բաժանումը և արտադրողականության աճը, մրցակցության բարձր մակարդակը, ազատ ձեռներեցության և մարդկային կապիտալի արագացված զարգացումը, քաղաքացիական հասարակության և կառավարման համակարգի բոլոր մակարդակների զարգացումը, զանգվածային հաղորդակցության բոլոր միջոցների զարգացումն ու օգտագործումը, ուրբանիզացման բարձր մակարդակը, կյանքի որակի աճը։ Արդյունաբերական հասարակության մեջ սոցիալական հաղորդակցությունն իրականացվում է ոչ թե կարճ, անձնավորված, այլ առարկայաինստիտուցիոնալ միջնորդավորված, անդեմ սոցիալական կապերի ու հարաբերությունների միջոցով։ Մոդեռնը նշանավորվում է ոչ միայն նույնականացման տոհմացեղային կառուցվածքի քայքայմամբ, այլև մարդու սոցիալական պատկերի խորագույն փոփոխությամբ։ Առաջնային սոցիալական խմբի տարրական մասնիկից մարդը վերածվում է սոցիոմշակութային միգրացիայի ընդունակ «աշխարհաքաղաքացու», սոցիալական աստիճանակարգության ցմահ համակարգը փոխարինվում է դերային նույնականացման սկզբունքորեն նոր, շարժուն համակարգով։ Անհատական ազատության և անձի ինքնավարության արժեքներն ամրագրվում են իրավափիլիսոփայական ուսմունքներում (բնական իրավունքի տեսություն, իրավական պետություն, խոսքի ազատություն և այլն)։ Ավանդական կապերից ազատագրման լայնածավալ սոցիալական գործընթացների, զանգվածային տեղաշարժերի և աշխարհիկացման արդյունքում ձևավորվում են կենսական նոր իմաստների սոցիալ-գոյաբանական նախադրյալները, ինչի հետևանքով անձնական ազատությունը՝ որպես սեփական կենսական հետագծի սոցիալական կառուցարկման «բաց հնարավորություն» (Է. Հուսեռլ), դառնում է արդյունաբերական հասարակության գլխավոր արժեքը։ Սոցիոմշակութային համակարգը դառնում է մարդակենտրոն, որտեղ «ցանկացած սոցիալական երևույթ արտահայտում է անհատական հատկությունների համահավաք ամբողջությունը» (Հ. Սպենսեր)։ Այսպիսով, արդյունաբերական հասարակությունը սոցիումի կազմակերպման մարդակենտրոն, անհատապաշտական համակարգ է, որտեղ կարևորվում են նորարարության և առաջընթացի գաղափարները, որոնք այլևս անցյալի կողմից լեգիտիմացվելու որևէ կարիք չունեն։ Նորարարության արժեքի կարևորումը նպաստում է սպառողական ճաշակների հարաշարժությունն արտացոլող, ըստ էության՝ համահարթեցնող, սոցիալական մի նոր ֆենոմենի՝ մոդայի ձևավորմանը, որի շնորհիվ մարդկանց պահվածքը, շփման ու հաղորդակցության կանոնները, անգամ ժեստերը դառնում են միասնական։ Տնտեսական գործունեության արդյունքների կախվածությունը կապիտալի շրջանառության արագությունից, աշխատօրվա

տևողությունից և հարահոսի արագությունից ստեղծում է ավանդական հասարակությանն անծանոթ նոր արժեք՝ ժամանակի արժեքը: Լույսի արհեստական աղբյուրների տարածումը նշանավորում է տեմպորալ լոկալիզմի ավարտը, «կապիտալիզմի ոգին» գործում է ոչ թե ըստ աստղաբաշխական օրվա տևողության, այլ քաղաքացիական օբյեկտիվացված ժամանակով: Առաջընթացի գաղափարն արտացոլում է արդյունաբերական արդիականության ոչ շրջափուլային, վերընթաց բնույթը, հնի նկատմամբ նորի արժեքային գերակայությունը: Մոդեռնիստական ուրբանիզացումը նվազեցնում է ընտանեկան օջախի երբեմնի սրբազան նշանակությունը: Սոցիալական տարածության ավանդապաշտական զատորոշումը (սրբազանի և առտնին-առօրեականի) իր տեղը զիջում է ապասրբազնացված, միատարր տարածությանը: Արդյունաբերական արդիականությունը տեխնիկայի աննախընթաց զարգացման ժամանակաշրջան է, այն ընկալվում է ոչ միայն որպես մարդկային աշխատանքի դյուրացման միջոց, այլև որպես մեծարման արժանի ինքնուրույն արժեք: Արդիականացման գաղափարախոսությունը հաճախ նույնացնում է սոցիալական առաջադիմությունը և տեխնիկական զարգացման մակարդակը («ամեն ինչ տեխնիկան է որոշում»): Տարածաշրջանային շրջանակներից դուրս եկած տեխնիկան և տնտեսական հիմնախնդիրները դառնում են համընդհանրական: Մարդկային հաղորդակցության ծավալների աննախադեպ ընդլայնումը հանգեցնում է զանգվածային դիմազրկման, ըստ էության՝ օտարման գործընթացների համընդհանրացման: «Պատմականորեն ձևավորված մշակույթները կտրվում են իրենց արմատներից և ձգտում են տեխնիկապես հագեցած տնտեսության, դատարկ ինտելեկտուալության»[5]: Ամեն ինչ փոխարինվում է իրական հոգևորի նմանակերպություններով: «Ժեստը,- նշում է Կ. Յասպերսը,- փոխարինում է կեցությանը, բազմազանությունը՝ միօրինակությանը, դատարկախոսությունը՝ իսկական հաղորդակցմանը, ապրումը՝ էկզիստենցիային: Հիմնական տեսանկյուն է դառնում անվերջ ընդօրինակումը»[6]: «Տեխնիկական ռացիոնալության» սկզբունքը ներթափանցում է անհատական և հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ մարդուն վերածելով զանգվածի, ձևավորվում է զանգվածային հասարակությունը, ժողովուրդը վերածվում է պատմահոգևոր ամբողջականությունից զուրկ անդեմ հանրության: Քաղաքակրթական զարգացման արդյունքում ստեղծված զանգվածային հասարակությունը ունի թե՛ իր առավելությունները, թե՛ թերությունները: Արդյունքներն ակնհայտ են, սակայն թերությունները հասու են միայն հոգեպես հարուստ մարդկանց, որոնք տառապում են անհատականության կորստից, դիմազրկման վտանգից: Զանգվածային հասարակության հիմնական սոցիալական դերակատարը՝ **«մարդ-զանգվածը»,** բնու-

[5] **Ясперс К.** Смысл и назначение истории. М., 1991, с. 335-336.
[6] Նույն տեղում:

թագրվում է երկու հիմնական հատկանիշներով՝ կենսական պահանջմունքների անարգել աճով և այն ամենի հանդեպ բնածին երախտամոռ վերաբերմունքով, ինչը նպաստել է նրա կյանքի որակի բարձրացմանը: Եսամետ «մարդ-զանգվածին» ավելի շատ մտահոգում է սեփական բարեկեցությունը և նվազ չափով՝ այդ բարեկեցության ակունքները և դրա համար վճարված սոցիոմշակութային գինը: Խորախորհուրդ կեցությունը կարծես մեկեն գաղտնազերծվում է, գաղտնազերծվելով՝ գորշանում: Դա քաղաքակրթական զարգացման այն գինն է, որ վճարում է մարդկությունն իր առաջընթացի համար: Հասարակության՝ որպես օրգանական ամբողջականության մասին պատկերացումը փոխարինվում է սոցիալական ինժեներիայի միջոցներով նախագծվող «սոցիալական համակարգ» հասկացությամբ: Իրականության սոցիալական կառուցարկումը դառնում է արդյունաբերական Մոդեռնի առաջատար թեմաներից մեկը[7]: Արդյունաբերական հասարակության մեջ սոցիալական հյուսվածքի անտեսանելի թելերը՝ սոցիալական հաղորդակցությունները, ձեռք են բերում ապրանքային փոխանակության տեսք (աշխատանքի արդյունքների, աշխատուժի, ծառայությունների և այլն): Մոդեռնիստական գիտակցության սոցիալական կախվածությունը հանդես է գալիս փողի և ապրանքների իշխանության տեսքով: Այն պատկերացումը, թե «փողն է կառավարում աշխարհը», դառնում է մոդեռնիստական գիտակցության խորհրդանիշը: Օտարված մարդը, ով կարծում է, թե իշխում է բնության վրա, իրականում դառնում է իրերի ու հանգամանքների գերին, քաղաքակրթական նոր մեգամեքենայի սոսկական կցորդը: «Հոգևոր արժեք» հասկացությունն ավելի շատ կապվում է սոցիալական հեղինակության խորհրդանիշների և սպառման առարկաների հետ, սկսվում է հոգևոր արժեքների առևտրայնացման գործընթացը: «Այն, - նկատում է Հ. Մարկուզեն, - որ զանգվածային հաղորդակցության միջոցները ներդաշնակորեն, հաճախ աննկատելիորեն արվեստը, քաղաքականությունը, կրոնը և փիլիսոփայությունը միախառնում են առևտրային գովազդին, նշանակում է, որ մշակույթի այդ ոլորտները բերվում են ընդհանուր հայտարարի՝ ապրանքային ձևի: Հոգու երաժշտությունը դառնում է սովորական երաժշտություն: Գնահատվում է ոչ թե ճշմարիտ արժեքը, այլ փոխանակային արժեքը: Այստեղ են status quo-ի ռացիոնալության առանցքը և ցանկացած օտարված ռացիոնալության սկիզբը»[8]: Ֆրանկֆուրտյան դպրոցի հիմնադիրներից մեկը՝ Վ. Բենյամինը, այս առնչությամբ ներկայացնելով իր խորը մտահոգությունը, գրում է. «Մարդկությունը, որ Հոմերոսի մոտ Օլիմպոսի աստվածների համար հանդիսության, ներկայացման առարկա էր, դարձավ ինքն իր համար հանդիսախաղ: Նրա ինքնօտարումը հասավ այն աստիճանի, որ ունակ

---

[7] Տե՛ս **Бергер П., Лукман Т.** Социальное конструирование реальности. М., 1995:

[8] **Маркузе Г.** Эрос и цивилизация. Одномерный человек: Исследование идеологии развитого индустриального общества. М., 2003, с. 320.

դարձավ սեփական ոչնչացումն ապրելու որպես բարձրագույն վայելք»[9]: Առաջընթացի մշակութամարդաբանական հատուցումը չի ուշանում, սոցիալական կապերն ու հարաբերությունները դիմազրկվում են, Ուրիշն ընկալվում է որպես սոցիալական գործառույթների սոսկական համալիր, մարդու նույնացումը սոցիալական դերի հետ հանգեցնում է մարդուց մարդու օտարմանը: Մոդեռնի սոցիալական արդյունք և հետևանք օտարումն այն քաղաքակրթական գինն է, որ վճարում է մարդը առաջադիմության համար:

Անհատական ազատության և սոցիալական մոբիլության արժեքների աճի հետևանքով խիստ մեծանում են վարքը և ակտիվությունը կանոնակարգող ու ամրագրող սոցիալական ինստիտուտների դերն ու նշանակությունը: Արդյունաբերական հասարակությունն աչալուրջ վերահսկողության հասարակություն է, մի հասարակություն, որտեղ սոցիալական կապերի ու հարաբերությունների հիմնական կարգավորիչն իրավունքն է: Իրավական ենթակառուցվածքի և իրավական տարածության լինելիությունն ու շարունակական ընդլայնումը նպաստում են հարուստի և աղքատի, անվանիի և շարքայինի, սևամորթի ու սպիտակամորթի ձևական հավասարության նախադրյալների հաստատմանը, ինչը խթանում է սոցիալական նախաձեռնության մինչ այդ չտեսնված աճն ու զարգացումը: Մոդեռնիստական ակտիվ-գործունեական համակարգի համատեքստում սոցիոմշակութային իմաստները վերածվում են սոցիալական տեխնոլոգիաների: Հսկողության այդ նոր աշխատակարգերը մարմնավորում են «…տեխնոլոգիական բանականությունը, որն ուղղված է սոցիալական բոլոր խմբերի բարօրությանը և համընդհանուր շահերի բավարարմանը, այնպես որ ցանկացած դիմակայություն թվում է իռացիոնալ, իսկ ցանկացած հակազդեցություն՝ անպատկերացնելի»[10]: Հ. Մարկուզեն այս առնչությամբ նշում է, որ մարդկությունն այստեղ բախվում է արդյունաբերական քաղաքակրթության տարօրինակ մի նոր իրողության՝ «**քաղաքակրթության իռացիոնալության ռացիոնալ բնույթի հետ**»[11](ընդգծումն իմն է - Գ. Ս.): Արդիականացման սոցիալական նոր տեխնոլոգիաները նպատակամղված են «նոր մարդու ձևավորմանը», որի հավատո հանգանակը **«մարդը ոչինչ է, եթե ոչինչ չունի»** սկզբունքն է: Ուստի պատահական չէ, որ «Ունենալ, թե Լինել»[12] երկընտրանքը «մարդ-զանգվածը» հանգուցալուծում է հօգուտ առաջինի: Ունենալու և լինելու միջև էկզիստենցիալ հակասության գիտակցումը մարդուն մղում է ինքնիրացման լուրջ խորհրդածությունների: Սակայն կա նաև այլ շահամիտում. ունենալ, տիրապետել, տնօրինել, դրանով իսկ՝ մեղմել, իսկ հարկ եղած

---

[9] **Беньямин В.** Произведение искусства в век его технической воспроизводимости // "Киноведческие заметки", 1988, № 2, с. 151.

[10] **Маркузе Г**., նշվ. աշխ., էջ 273:

[11] Նույն տեղում, էջ 272:

[12] Տե՛ս **Фромм Э.** Иметь или Быть? М., 2000:

դեպքում՝ խլացնել մարդկային կյանքի ներքին հակասականությունը, դիմել սեփական գոյության արդարացման պատրանքային, թվացյալ, ըստ էության, օտարված ձևերին: «Մարդ-զանգվածի» համար տիրապետելու դիրքորոշումն ընկալվում է իբրև սոցիալական կյանքի բնականոն գործառույթ. ապրելու համար պետք է տիրանալ ժամանակակից կյանքին գոհացում պատճառող իրերին: Շուկայական կողմնորոշման պայմաններում ուրիշների ընկալման և ինքնընկալման միջև տարբերությունները վերանում են, ինչպես իրեն, այնպես էլ ուրիշներին մարդն ընկալում է իբրև ապրանք: Անհատականությունը, այն, ինչը մարդու մեջ անկրկնելի ու եզակի է, արժեզրկվում է: Մարդկային ինքնատիպությունը դառնում է «տարօրինակություն» բառի հոմանիշը, իսկ «հավասարություն» բառը դառնում է փոխադարձ փոխարինելիության համարժեքը, ըստ էության անհատականության ուղղակի ժխտումը[13]: Զանգվածային հասարակությանն անհրաժեշտ են այնպիսի մարդիկ, որոնք սպառումից երբեք չեն հագենում, որոնց ճաշակները համահարթեցված, իսկ հաճույքները կանխատեսելի են: Այդ հասարակությունը կարիք ունի այնպիսի մարդկանց, որոնք իրենց համարում են ազատ ու անկախ, սակայն հաճույքով պատրաստ են ենթարկվելու, անելու այն ամենը, ինչ սպասում են իրենից, մարդկանց, որոնց կարելի է կառավարել առանց հարկադրանքի, առաջ տանել առանց խարիզմատիկ առաջնորդների, դրդել այնպիսի գործողության, որը ոչ մի նպատակ չի հետապնդում՝ բացի մեկից՝ գործել, հաջողել, վայելել[14]:

Առաջադիմության ոգեղեն ակունքներից զուրկ, հաճոյաշատ կյանքի հասնելու զուտ տեխնոկրատական այսպիսի զարգացումը սոցիալ-հումանիտար առումով իրական վտանգներ է պարունակում: Կուտակված սոցիալական փորձի կայունացնող հիմունքներից զրկվելը, ավանդական սոցիոմշակութային արժեքներից կամովին կամ հարկադրական հրաժարումը հղի են սոցիալական նշանակությունների համակարգի լուրջ ձևախեղումներով: Սոցիալ-փիլիսոփայական իմաստով դա նշանակում է սոցիալական էկոլոգիայի հիմնարար սկզբունքների հավասարակշռության խախտում, սոցիալական ժառանգորդման աշխատակարգերի խափանում: Սոցիալական նշանակությունների համակարգը սոցիալական իրականության անբաժանելի մասն է, նրա անընդհատ վերարտադրության ծրագիրը, կայունության արտադրության և վերարտադրության երաշխավորը, ուստի այդ համակարգի խափանումը հղի է ապամարդկայնացման, ըստ էության՝ բարբարոսացման աղետալի հետևանքներով[15]:

Գիտությունների, հաղորդակցության միջոցների և բժշկակենսա-

---

[13] **Фромм Э.** Бегство от свободы. Человек для себя. Минск, 2000, с. 461-462.

[14] **Фромм Э.** Наш образ жизни делает нас несчастными // «Литературная газета», 24 октября 1964:

[15] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Мотрошилова Н. В.** Цивилизация и варварство в современную эпоху. М., 2007:

բանական ոլորտի աննախադեպ զարգացման շնորհիվ քաղաքակրթական առաջադիմության սոցիոմշակութային հատուցման գինն ավելի է բարձրանում **հետարդյունաբերական (հետարդիական) հասարակությունում**: Դա մի հասարակություն է, որի տնտեսության մեջ գիտատեխնիկական հեղափոխության և ազգաբնակչության եկամուտների էական աճի հետևանքով, ի տարբերություն արդյունաբերական հասարակությանը բնորոշ ապրանքների արտադրության, առաջնայնությունը տրվում է ծառայությունների մատուցմանը: Հիմնական արտադրողական ուժ են դառնում գիտելիքը և տեղեկատվությունը, տնտեսության զարգացման շարժիչ ուժ՝ գիտական հետազոտությունները: Այդ հասարակության կարևոր հատկանիշներն են մարդու կրթական մակարդակը, պրոֆեսիոնալիզմը և կրեատիվությունը: Հետարդյունաբերական հասարակության սոցիալական հաղորդակցությունները ներկայացնում են սոցիալական կապերի ու հարաբերությունների անձնավորված և անանուն-անդեմ տիպերի հախուռն համադրություն: Սակայն գլոբալ մասշտաբով վիրտուալ տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման հետևանքով օրավուր նվազում է անձնավորված սոցիալական կապերի տեսակարար կշիռը: Հասարակական դաշինքի վրա հիմնված ունիվերսալ սոցիալականությունն իր տեղը զիջում է ժամանակավոր կապերի ու շփումների վրա հիմնված ցանցային սոցիալականությանը: «Կատարյալ մշակույթի սուրբ սրբոցը՝ ազատ սավառնող ֆանտազիան, զոհաբերվում է երևակայության դժգույն փոխարկիչների ճյուղավորված տեսականուն: Բարոյական առումով, կրոնի փոխարեն կինիկությունն է դառնում քաղաքակրթության ճանկերից դուրս պրծնելու համար նվազագույն ջանք անգամ գործադրելու անընդունակ, ուստի նաև՝ ծայրաստիճան անպաշտպան հոգիների աֆիոնը»[16]: Հետարդիականության պայմաններում ավանդական հասարակությունից ժառանգված դեմ առ դեմ սոցիալական կարճատև կապերը ձեռք են բերում ժամանակավոր, երբեմնակի բնույթ՝ սոցիալական տարածության մեջ որևէ կերպ չպայմանավորելով մարդու դիրքորոշումը: Զգալիորեն թուլանում են սոցիալականության համակարգային կառուցարկման դերն ու նշանակությունը, փոխարենն էականորեն աճում է որոշակի խնդիրների լուծման նպատակով ստեղծված ոչ ֆորմալ տարատեսակ միավորումների, նախաձեռնող խմբերի (հաճախ՝ վիրտուալ), ֆան ակումբների քանակը: Զգտելով արագորեն հարմարվել փոխակերպվող պայմաններին՝ մարդիկ սկսում են մերժել կայունությունն ու տևականությունը՝ որպես բնականոն գոյության կարևոր հիմունքներ: Անհատի համամասնակցությունն իմաստաարժեքային առումով տարբեր, երբեմն ուղղակի հակադիր սոցիոմշակութային հանրույթներին, առանց դրանցից որևէ մեկի հետ սեփական անձի իրական նույնականացման, արտահայտվում է «**խաղ**» հետարդիական հասկացութ-

[16] **Էդ. Աթայան,** Հոգի և ազատություն, Եր., 2005, էջ 196:

յամբ: Խաղը՝ որպես սոցիալական գործունեության փոխաբերություն, արտահայտում է «նորմի բռնությունից ազատագրվելու» (Վ. Վելշ) հետարդիական գիտակցության ձգտումը: Կյանքը որպես խաղ ընդունելու դեպքում այն հագեցած, զվարճալի և հետաքրքրական է, սակայն դրա սոցիոմշակութային գինը «իրական կեցության չքացումն է», սոցիալական տնանկությունը: Վերլուծելով քաղաքակրթության զարգացման հետարդիական փուլի նույնականությունից «փախչող» մարդու մարդաբանական տիպերը՝ Զ. Բաումանը նկատում է, որ ձևավորվում են «խաղացող», «զբոսաշրջիկ», «թափառաշրջիկ» և «դատարկաշրջիկ» (ֆլանյոր) մարդկային տիպերը, որոնց կենսառճին խորթ է նույնականության նկատմամբ հավատարմությունը[17]: Կյանքի և կենսագործունեության կազմակերպման նոր պայմաններում մարդը գործնականում կորցնում է նախկինում իր վարքն ու գործողությունների տրամաբանությունը պայմանավորող նույնականության երբեմնի հենարանները: Հասարակական կեցության համակարգում իր տեղը կորցրած մարդն ազատությունն ընկալում է որպես դատարկություն, սոցիալապես պահանջարկված չլինելու հանգամանքը դառնում է հոգեբանական ծանր ապրումների պատճառ: Սոցիալական նույնականացման բազիսային խմբերի անհետացումը մարդուն զրկում է ավանդական հասարակությանն այնքան բնորոշ սոցիալ-հոգեբանական պաշտպանվածությունից, սոցիալապես անտուն մարդը հայտնվում է էկզիստենցիալ մենության մեջ: **Կեցության մեջ մշակութամարդաբանական իմաստով արմատավորված չլինելու հանգամանքը ծնում է անհետացող իրականության սոցիալ-հոգեբանական պարադոքսալ զգացողություն:** Անձնապաստան մարդու սոցիալական ինքնազգացողությունը ձեռք է բերում անկայունության հիվանդագին հատկանիշներ, նա կորցնում է գոյություն ունեցողի նկատմամբ երկյուղածությունը, նրա նկատմամբ հարգանքը և կեցության հանդեպ պատասխանատվությունը: Զրկված լինելով ինքնիրացման համընդգրկուն սոցիալական տարածությունից՝ ժամանակակից մարդը դեգերում է սոցիոմշակութային փորձի տարբեր շերտերում՝ դրանցից յուրաքանչյուրում իրացնելով իր անձնավորության միայն մի մասը: Ինքնանույնականացման ժամանակավոր խմբերի դիվերսիֆիկացիան, նկատում է Ռ. Էկոն, նրան վերածում է մարդ-գործառույթի, «միաչափ մարդու» (Հ. Մարկուզե), երբեմն էլ՝ «առանց հատկությունների մարդու» (Ռ. Մուզիլ)[18] :

Իրականության անհետացումը խորացնում և խնդրահարույց է դարձնում սեփական Ես-ի էկզիստենցիալ սահմանների հարցը: Սոցիալ-խմբային նույնականացման հիմքերի խախտումը և նույնականացման ճգնաժամը հանգեցնում են սուբյեկտիվ իրականության հաղորդակցական աջակցության թուլացմանը: Ինչպես հայտնի է, մարդու

---

[17] Տե՛ս **Бауман З.** От паломника к туристу // "Социологический журнал", 1995, էջ 144-145:

[18] Տե՛ս **Эко У.** Средние века уже начались // "Иностранная литература", 1994, № 4:

անհատականությունը ձևավորվում է «ոչ միայն հանգամանքների և դաստիարակության» միջոցով, ինչպես կարծում էին Լուսավորականության ներկայացուցիչները, այլև գիտակցության մեջ սոցիալապես կառուցարկվում է նշանակալի ուրիշների ազդեցությամբ, հասարակական կարծիքը միշտ ճշգրտում, սրբագրում է սեփական անձի մասին պատկերացումները: Սիմվոլիկ ինտերակցիոնիզմի նախակարապետ Չ. Կուլին առաջնային սոցիալական խմբի նույնականացնող դերը սահմանում էր որպես «հայելային Էգո-ի էֆեկտ»[19]: Հայելային Էգո-էֆեկտին հասնելու անհնարինությունը, այսինքն՝ քեզ համար նշանակալի հայելի-գիտակցությունների մեջ սեփական Ես-ի արտացոլման անհնարինությունը հանգեցնում է սուբյեկտիվ իրականության թուլացմանը, ծայրահեղ դեպքերում՝ ամբողջականության կազմալուծմանը: Սուբյեկտիվ իրականության հաղորդակցական աջակցության թուլացման հետևանքով ինքնությունը կոտորակվում է, բեկորանում՝ նման այն սոցիոմշակութային աշխարհներին, որոնց հետ մարդն իրեն ժամանակավորապես նույնացնում է: Վարքի միասնական շահամիտում և արժեքների ընդհանուր համակարգ չունեցող հետարդիական հասարակության համար **կենսիմաստային ճգնաժամը** դառնում է անտարբերության, այսինքն՝ մարդու էութենական ուժերի լիակատար կապիտուլյացիայի լուրջ պատճառ: Անհատական գոյատևման ասոցիալ հիմունքները, ձևախեղելով մարդուն, նրան դարձնում են իներտ և անտարբեր հասարակականի նկատմամբ: Կոլեկտիվ սրբությունների և համընդհանուր իմպերատիվ արժեքների բացակայությունը, կասկածն ու անվստահությունը պարարտ հող են ստեղծում անտարբերության ձևավորման և դրա շարունակական վերարտադրության համար: Սոցիալականը, կորցնելով իր երբեմնի արժեքն ու նշանակությունը, թաքցնում է իր թիկունքում գտնվող սոսկական վերացարկումը: Այս վիճակը ֆրանսիացի փիլիսոփա Ժ. Դելյոզն ախտորոշում է որպես «**սոցիալական մտազարություն**» (շիզոֆրենիա)[20]: Բազմաթիվ իրականություններում դեգերող, այս հիվանդությամբ տառապող անձն ի վիճակի չէ ձևավորելու ո՛չ իր և ո՛չ էլ աշխարհի միասնական պատկերը: Սոցիալական մտազարությունը հետարդիական մարդու ոչ թե հոգեկան, այլ հոգևոր հիվանդություն է: Կեցության մեջ չամրակալված ու լքյալ սոցիալական վիճակն արտահայտվում է «**սուբյեկտի մահ**» հետարդիական ելակետային փոխաբերության միջոցով: Մշակութամարդաբանական առնչությամբ հետարդիականությունը նշանավորում է Ուրիշի ընկալման արքետիպի էական փոխակերպում՝ արդյունաբերական հասարակության սոցիալական գործառույթների անանուն կրող «միաչափ մարդուց» մինչև հետարդիական հասարակության խաղի և հեգ-

---

[19] **Кули Ч. Х.** Человеческая природа и социальный порядок. М., 2000, с. 125-135.

[20] Տե՛ս **Делез Ж., Гваттари Ф.** Анти-Эдип. Капитализм и шизофрения. Екатеринбург, 2007:

նանքի ապակենտրոն գործակալ, կեցության մեջ արմատներ չունեցող սոսկական **ակտոր**: Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառող ժամանակակից օգտատերը հաղորդակցային խաղընկերոջն անգամ որպես դերային գործառույթների թանձրուկ՝ «մասնակի Ուրիշ» (ինչը բնորոշ էր Մոդեռնին) չի ընկալում. «Ուրիշը» նրա համար ընդամենը տեղեկատվական կոդերի, նշան-հաղորդագրությունների գործառող անդեմ համակարգ է: Այսպիսով ձևավորվում է անսուբյեկտ սոցիալականության մի պարադոքսալ հասարակություն: Ժամանակակից հասարակության նախաբեմ է դուրս գալիս ոչ թե հեղինակը, ինչը բնորոշ էր հասարակության նախորդ՝ պատմական տիպերին, այլ ակտորը, ճանաչման և մեծարանքի է արժանանում ոչ թե հեղինակը, այլ կատարողը և հանդիսատեսը: Ակտորը զանգվածի մարդն է, նա ոչ թե անձ է, այլ կյանքի հզոր հոսքին ենթակա խամաճիկ, նա խաղում է ոչ թե իր կողմից ընդունված, այլ պարտադրված կանոններով իրեն ձեռնտու իրադրային կյանքի դրվագային դերերը, իր գործունեության իմաստը ոչ թե ինքն է որոշում, այլ ուրիշները: Հետարդիականության խոշոր տեսաբան Ժ. Բոդրիյարի կարծիքով, գերիշխանության գաղափարի մտասևեռումն ունեցող զանգվածն իր մտահոգությունների շրջանակից արտամղում է սոցիալականը: Զանգվածը սկսում է թելադրել սոցիալականով չպայմանավորված իր ճաշակն ու կամքը: Հեշտասեր մարմինը խռովվում է ընդդեմ որոնող ոգու: Զանգվածի կողմից կլանված ամեն ինչ, որևէ ազդեցություն չունենալով սոցիումի կառուցվածքային հարաշարժության վրա, հենց նրա մեջ էլ մարում է: «Ռացիոնալ հաղորդակցությունը և զանգվածներն անհամատեղելի են, –նկատում է Ժ. Բոդրիյարը, –զանգվածներին իմաստ են հրամցնում, նրանք տեսարան են նախընտրում: Ոչ մի կերպ չհաջողվեց նրանց համոզել, որ անհրաժեշտ է բովանդակության կամ գոնե հաղորդագրության կոդի նկատմամբ լուրջ վերաբերմունք դրսևորել: Զանգվածները …կաղապարված են կարծրատիպերով, պատրաստ են ընկալել ցանկացած բան, ինչ խաղահանդեսային է»[21]: Դիմելով Ֆ. Բեկոնի հայտնի փոխաբերությանը՝ կարելի է ասել, որ անձավի և սեռի կուռքերն իրեց տեղը զիջում են թատերական ու շուկայական կուռքերին՝ հացին ու տեսարաններին: Մշակութասեր հասարակությունն աստիճանաբար վերասերվում է տեսարանասեր զանգվածի: «Օտարումը»՝ որպես արդյունաբերական հասարակության բացասական արժեք, հետարդիական հասարակության մեջ վերածվում է «**ինքնության ճգնաժամի**», ինչը սոցիալական կեցության մեջ իր «էկոլոգիական կացարանից» զրկված ապակենտրոն անձի մշտական ու անխուսափելի ուղեկիցն է[22]: Ինքնության ճգնաժամի մեջ գտնվող մարդը, ի թիվս քաղաքակրթական (շպենգ-

[21] **Бодрийяр Ж.** В тени молчаливого большинства, или Конец социального. Екатеринбург, 2000, с. 19.

[22] Տե՛ս **Россман В.** Мистерия центра: Идентичность и организация социального пространства в современных и традиционных обществах // "Вопросы философии", 2008, № 2:

լերյան իմաստով) այլ հումանիտար տկարությունների, տառապում է նաև սոցիալական ամնեզիայով: Ամնեզիան միայն մոռացում չէ, սոսկական մոռացման դեպքում մարդը սովորաբար հիշում է այն, ինչ մի ժամանակ իմացել է, իսկ հետո մոռացել է: Ամնեզիան իմացության փաստի իսկ լրիվ մոռացումն է: Այդ ախտանիշը կրողին անծանոթ և խորթ է հիշողության, հետևաբար և՝ գերակա նշանակություն ունեցող որևէ արժեհամակարգի կամ անդրանձնական գաղափարի մասին պատկերացումը (հիշենք Չ. Այթմատովի մանկուրտի մասին առասպելը): Նա չի ցավում անցյալի հետ կապի կորստի համար, ուստի դատապարտված է մշտապես ապրելու ապասրբազնացված ներկայում:

Անդրադառնանք կյանքի մշակույթի հետարդյունաբերական փուլի մեկ այլ առանձնահատկության: Եթե կարգավիճակի ծիսական փոփոխությամբ ավանդական հասարակության մարդն իր սոցիալական դերից հոգնությունը մեղմում, փարատում էր «կառնավալային մշակույթի» (Մ. Բախտին) բազմաթիվ տոնակատարությունների շրջանում սոցիալական ժամանակավոր լիցքաթափման միջոցով, ապա ժամանակակից մարդը դատապարտված է իր կյանքն անցկացնելու մշտական «կառնավալային» անձանձիր իրավիճակում: «Սոցիալական դեր» հասկացությունը յուրահատուկ է միայն սոցիալական կայուն կառուցվածք, ուստի նաև՝ դերերի հստակ տարբերակում ունեցող հասարակությանը: Հետարդիականության շրջանում հասարակական կապերի ու հարաբերությունների սորունությունը, սոցիալական կառուցարկման հիմունքների դերի ու նշանակության զգալի նվազումը հանգեցնում են կեցության իրադրային կոտորակմանը, սոցիալական հաստատուն կառուցվածքի խախտմանը, անհստակությանը: Սոցիալական տարբերակման չափանիշները, դառնալով սինթետիկ և ձեռք բերելով բազմաչափ բնույթ, էապես բարդանում են: Շրջանառության մեջ դրված «խորհրդանշական կապիտալ» հասկացությունը, իր բովանդակային ծանրաբեռնվածության մեջ ներառելով սոցիոմշակութային տարբերությունների բավականին լայն տեսականի, այնուհանդերձ դասակարգաստեղծ գործառույթ չի իրականացնում, այն ավելի շատ ծառայում է որոշակի կենսառճերի տարբերակման, դրոշմակնքման նպատակներին: Այդ իսկ պատճառով հումանիտար ոլորտի արևմտյան առաջատար ներկայացուցիչներից շատերը (Պ. Բուրդյե, Ժ. Բոդրիյար, Ժ. Դելյոզ և այլք) կարծում են, որ հետարդիականության շրջանում հասարակության սոցիալական շերտավորումը խիստ պայմանական է, ըստ այդմ՝ «դասակարգերը միայն թղթի վրա գոյություն ունեն»:

Հետարդյունաբերական տեղեկատվական հասարակությունում պարտված բնութենականն իր տեղը զիջում է հաղթանակած արհեստականին, երբեմնի զորեղ ռեֆերենտների թուլացումը և սոցիալականով հագեցված իրականի հոգեվարքն ազդարարում են սիմուլյացիայի դարաշրջանի սկիզբը: Իրականության փոխարեն ձևավորվում է գերի-

բականություն կամ վիրտուալ իրականություն, որտեղ արդեն այլևս էական չէ, թե ինչն է իսկապես իրական, ինչը՝ ոչ, որտեղ էական է միայն անվերջ հոսող լուրերի ու իրադարձությունների անընդհատությունը[23]: Մարդկությունը թևակոխում է զարգացման մի շրջան, երբ տեղեկատվական հոսքն անընդհատ մեծանում է, իսկ իմաստը՝ նվազում, տեղեկատվությունն իմաստ արտադրելու փոխարեն խաղարկում է այն, սկսում է «խժռել իր իսկ բովանդակությունը», հաղորդակցությունն ու իրական սոցիալականը: Ժամանակի հետարդիական ընթացքը մեկնաբանելու համար ստեղծվում է իրականի նենգապատկերը, պատրանք արտահայտող կեղծանմանակ (սիմուլյակր - Ժ. Բատայ) հասկացությունը, որն արտահայտում է օբյեկտի հանդեպ նշանի, բնօրինակի հանդեպ պատճենի գերիշխող արժեքն ու նշանակությունը: - Սոցիալական կեցության մեջ ամեն ինչ դառնում է սիմուլյատիվ: Մշակութային ավանդական իմաստների նկատմամբ քամահրական վերաբերմունքը, բառի հետ կամայական խաղը (Ժ. Դերիդա), «թարգմանության գոյաբանական հարաբերականությունը» (Ու. Կուայն) և «արմատական մեկնելիությունը» (Դ. Դևիդսոն) «ինտելեկտուալ ատլետների» ջանքերով (այսպես էին իրենց բնութագրում Ժ. Դերիդան և Ժ. Դելյոզը) դառնում են հետարդիական փիլիսոփայության առաջատար թեմաները: Սոցիալական իրականության ելակետային փոխաբերություն է դառնում տեքստը (բառի ամենալայն իմաստով), սոցիալական կառուցարկումը՝ որպես կեցության իմաստային առանցքի կարևոր բաղադրիչ, դուրս է մղվում սոցիալապես անպատասխանատու «նշանակությունների խաղի» կողմից (դեկոնստրուկցիայի սկզբունք): Պատահական չէ, որ նման պայմաններում մարդու էությունն ընկալվում է ոչ թե որպես հասարակական հարաբերությունների ամբողջություն, այլ ընդամենը որպես լեզվական խաղերի հատման կետ, նվազում է մարդկանց միջև անմիջական, կենդանի շփումը, կրճատվում է ռեֆլեքսիայի, վերացարկման, զարգացման խորհրդանիշների սոցիոմշակութային միջավայրը, հասկացությունները փոխարինվում են հաղորդագրության կոդ հանդիսացող պատկերներով, առավելագույնս պարզունակացված սոցիոկեցությունը զրկվում է բնական ու ջերմ շփման անփոխարինելի հմայքից: Ճիշտ է, տեղեկատվական առնչությամբ վիրտուալ հաղորդակցությունը, կրճատելով նախկինում անհաղթահարելի թվացող բոլոր քաղաքական և աշխարհագրական սահմանները, մարդկանց միավորում է (համաշխարհային սարդոստայն), սակայն հուզական և սոցիալական առումով նրանց բաժանում, մեկուսացնում է, ինչը, բնականաբար, մեծացնում է սոցիալական պատասխանատվության էրոզիայի հավանականությունը: Այսպես, ռազմական գործողությունների վիրտուալացումը, ավելին՝ դրանց ընթացքին առցանց հետևելը կտրուկ

[23] Տե՛ս **Бодрийяр Ж.**, նշվ. աշխ., էջ 29:

նվազեցնում են անձնական պատասխանատվության զգացողությունը. պատերազմը և դրա մշտական ուղեկից մահն այլևս չեն ընկալվում որպես ողբերգություն, դառնում են ոչ թե կարեկցանքի, այլ վիճակագրության առարկա, պատերազմը սուբյեկտիվորեն չի ընդունվում որպես զանգվածային սպանություն, հաղթողի խիղճը հանգիստ է, չէ՞ որ նա անձնապես չի սպանել, նա միայն կոճակ է սեղմել (թիրախային հարվածներ), պատերազմն ու ռազմական գործողություններն ընդամենն ընկալվում են որպես համակարգչային խաղ: Ցավոք, մարդկությունը դեռևս հստակորեն չի ըմբռնում, թե ինչ սոցիալ-հոգեբանական և մշակութամարդաբանական անշրջելի հետևանքներ կարող է ունենալ մահվան վիրտուալացումը: Սակայն այսօր իսկ պարզ է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների անընդհատ զարգացումը, բժշկակենսաբանական փորձարկումների օրավուր ընդլայնվող միջավայրը, ընդհանրապես **քաղաքակրթական առաջընթացի սոցիոմշակութային գինը շատ բարձր է լինելու, քանի որ օբյեկտիվ սոցիալական նշանակությունների համակարգում դրանք հանգեցնելու են լուրջ, դեռևս ամբողջությամբ չուսումնասիրված մարդաբանական տեղաշարժերի, մշակույթի ավանդական ունիվերսալիաների խորագույն փոխակերպումների**:

Քաղաքակրթական սիմբիոզ ներկայացնող ժամանակակից հասարակություններում, ինչպես հետխորհրդային բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում սոցիումի գոյության և գործառության վերոնշյալ պատմական երեք տիպերին բնորոշ գործընթացները ծավալվում են միաժամանակ: Հետարդիական քաղաքակրթության ընձեռած բոլոր հնարավորություններից և առավելություններից օգտվելով հանդերձ՝ այդ հասարակության մարդը քիչ առ քիչ սկսում է գիտակցել, որ Լուսավորականության շրջանում գովերգված բուրժուական անհատապաշտությունը և կյանքի կազմակերպման անհատապաշտական սկզբունքներն այլևս անկարող են դիմակայելու ռիսկաշատ գոյության ժամանակակից մարտահրավերներին: Ինքնության և սոցիոմշակութային անվտանգության պահպանման տեսանկյունից անձնավորված (կարճ) սոցիալական կապերն ավելի կարևոր և գնահատելի են, քան մոդեռնիստական անանուն կապերն ու հարաբերությունները: Ավանդապահական հոգեմտակեցվածքի նկատմամբ քամահրական վերաբերմունքը հղի է մարդաբանական և սոցիոմշակութային բազմաթիվ վտանգավոր և անկանխատեսելի հետևանքներով: Այսօր տեխնիկա-տեխնոլոգիականի հետ մեկտեղ մշակութամարդաբանական առումով առաջադիմում են այն երկրները (Ճապոնիա, Չինաստան, Հարավային Կորեա), որոնք կարողանում են առավելագույնս համատեղել ավանդական և արդիական արժեքները: **Ավանդույթն աշխարհայացքային ունիվերսալիաների հուսալի պահեստարանն է, այն սոցիալական խմորիչը, այն կենսիմաստային առանցքը, որոնք ապահովում են համամարդկային մշտամնա արժեքների շարունակականությունը**: Այդ

իսկ պատճառով անգամ դասական մոդեռնիզացման երկրներում այսօր հսկայական ջանքեր են գործադրվում, որպեսզի վերականգնվեն ավանդական հասարակության արժեքները (սոցիալական պատասխանատվություն, աջակցություն և փոխօգնություն, հոգատար վերաբերմունք մարդու և բնության հանդեպ և այլն), որոնք ժամանակին դրվել էին առաջադիմության քաղաքակրթական զոհասեղանին: Ուստի այն ամենի նկատմամբ հոգատար և զգուշավոր վերաբերմունքը, ինչն առաջին հայացքից չի ներառվում արդիականության նախագծի մեջ, պետք է դառնա սոցիալական էկոլոգիայի իմպերատիվ արժեք:

Բանալի բառեր – *սոցիոմշակութային ունիվերսալիա, ավանդական հասարակություն, ավանդույթ, արդյունաբերական հասարակություն, օտարում, հետարդյունաբերական հասարակություն, «խաղ», ինքնության ճգնաժամ, կեղծանմանակ*

ГАГИК СОГОМОНЯН – ***Социальная динамика культурно-антропологических трансформаций.*** – По мере развития цивилизации постепенно иссякают истоки социального конструирования. Деформация связей и отношений в обществе угрожает социальной энтропией, социальное превращается в пустой знак, лишённый предметного содержания. Размываются устойчивые структуры социально-групповой идентификации, всё отчётливей «новая атомизация» и её оборотная сторона – массовизация, современная «смерть социального», его превращение в симулякр (Ж. Бодрийяр). Неужели «смерть социального» – расплата за цивилизационный прогресс?

В статье проводится сравнительно-типологический анализ традиционного, индустриального и постиндустриального обществ и делается вывод, что в постсовременности не только технико-технологически, но и культурно-антропологически прогрессируют те страны, где социокультурные универсалии умело сочетаются с традиционными и современными ценностями.

Ключевые слова: *социокультурная универсалия, традиционное общество, индустриальное общество, отчуждение, постиндустриальное общество, «игра», кризис идентичност, симулякр*

GAGIK SOGHOMONYAN – ***Social Dynamics of Cultural Anthropological Transformations***. – In parallel with the civilizational development of the society, the true origins of the social construction gradually enfeeble. The deformation of the social ties and relations threaten to turn into a "social entropy", the social converts into a blank sign, devoid of any objective content. The erosion of the sustainable patterns in groups that represent the social identification, "a new atomization" and its reverse side - "massivization" - is the modern manifestation of the "demise of the social ', its appeal to the" simulacrum ". Does "social death" mean sociocultural retribution for civilization progress?

As a result of the comparative-typological analysis of traditional, industrial and postindustrial societies, the author concludes that in the cultural and anthropological sense those countries progress most apart from technical and technological realities of the postmodern society who skillfully combine panhuman socio-cultural universals, traditional and modern values.

Key words: *sociocultural universals, traditional society, tradition, industrial society, alienation, postindustrial society, "game", identity crisis, simulacrum*